Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 հունվար 2024թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-128/23» ծածկագրով գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2023 թվականի օգոստոսի 4-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար սողնակների, կափույրների և փականների ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-128/23» ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ալեքս-Պրո» ՍՊԸ-ն:

Համաձայն էլեկտրոնային աճուրդով ներկայացված գնային առաջարկների՝ «Ալեքս-Պրո» ՍՊԸ-ն ներկայացրել է ամենացածր գնային առաջարկ և սեպտեմբերի 9-ին կայացած նիստում ճանաչվել է հաղթող մասնակից 5-րդ չափաբաժնով:

2023 թվականի սեպտեմբերի 25-ին «Ալեքս-Պրո» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ, որը սահմանված ժամկետում ստորագրվել է մասնակցի և պատվիրատուի կողմից:

Սույն գնման ընթացակարգը կազմակերպված է եղել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և մասնակցին լրացուցիչ համաձայնագիրը ուղարկվել է 2023 թվականի նոյեմբերի 22-ին, սակայն սահմանված ժամկետում «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի կողմից չի պահպանվել պայմանագրով սահմանված ժամկետում իր կողմից ստորագրված լրացուցիչ համաձայնագրի, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովման ներկայացման պահանջը, որի հետևանքով պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվել է:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Ալեքս-Պրո» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու հաջորդող օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Ալեքս-Պրո» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**